ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

24 հոկտեմբերի 2024 թվականի N 1666-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2018 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 12-Ի N 455-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասով՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը ո ր ո շ ու մ է.

1. Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի «Բարձրագույն ուսումնական հաստատություններում ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 1994 թվականի մայիսի 19-ի N 232 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 455-Ն որոշման 1-ին կետով սահմանված հավելվածում կատարել հետևյալ փոփոխությունը և լրացումները՝

1) 3-րդ կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«1) կրտսեր հրամանատարական խմբի պաշտոնների համալրման պատրաստությունը՝ նախարարության Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ակադեմիայում՝

զինվորական մասնագիտություններով կրտսեր սպայական կազմի պատրաստման ծրագրերով.».

2) 7-րդ կետի վերջը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Զինվորական պատրաստության օրվան նախորդող օրը Երևան քաղաքում չբնակվող քաղաքացիների գիշերակացը, այդ քաղաքացիների ցանկությամբ, կազմակերպվում է համապատասխան ռազմաուսումնական հաստատությունում:».

3) 9-րդ կետի 1-ին ենթակետը «ներկայացնելու» բառից հետո լրացնել «կամ կնքված պայմանագիրն օրենքով սահմանված այլ հիմքով վաղաժամկետ լուծվելու» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՓՈԽՎԱՐՉԱՊԵՏ Տ. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Երևան

24.10.2024
ՀԱՎԱՍՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ